ԽՆԿՈ ԱՊՈՐ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ 90-ԱՄՅԱ ՈՒՂԻՆ*

ՀՏԴ: 027.625(479.25)

ՌՈՒԶԱՆ ՏՈՆՈՅԱՆ

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի տնօրեն

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանն ամբարում է հայ տպագիր ժառանգության մի սփվար հատվածը և որպես Հայաստանի Հանրապետությունում մանկապատանեկան ընթերցանության կազմակերպման հարցերով զբաղվող մեթոդական կենտրոն, արդեն 90 տարի մանուկների և պատանիների շրջանում իրականացնում է ընթերցանության զարգացման քաղաքականություն:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել գրադարանի հիմնադրման պատմությունն ու 90-ամյա գործունեության ուղին՝ ընդգծելով այն կարևոր տեղն ու դիրքը, որ ունի այս մշակութային կառույցը հայ հասարակության մեջ:

Khnko Aper National Children's Library collects a large part of the Armenian print heritage and as a methodical center dealing with issues of organizing children's and youth reading in the Republic of Armenia, has been implementing reading development policy among children and adolescents for 90 years.

The purpose of this article is to present the history of the foundation of the library and the path of its 90-year activity, emphasizing the important place and position that this cultural structure has in the Armenian society.

Ինչպես հղել՝ Տոնոյան Ռ. (2023), Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի 90-ամյա ուղին, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, *2*(2), 80-87:

---

* *Հոդվածը ներկայացվել է 22.11.2023, գրախոսվել է 30.11.2023, ընդունվել է տպագրության 01.12.2023:*
The article was submitted on 22.11.2023, reviewed on 30.11.2023, accepted for publication on 01.12.2023.

How to cite (APA style): Tonoyan R. (2023), The 90-year path of the Khnko Aper National Children's Library, *Herald of the Armenian Library Association*, *2*(2), 80-87.

1933 թ. ՀԽՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի որոշմամբ հիմնադրվում է Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը՝ որպես առաջին մասնագիտացված մանկական պետական գրադարան:

Գրադարանը սկզբնապես գտնվում էր Երևան քաղաքի Խ. Աբովյանի անվան դպրոցի հարևանությամբ: Ի պատիվ հայ առակագիր, ՀԽՍՀ վաստակավոր մանկական գրող և ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ Աթաբեկ Հովհաննեսի Խնկոյանի (գրական կեղծանվամբ՝ Խնկո Ապեր)՝ գրադարանը 1935 թ.՝ նրա մահվանից հետո, անվանակոչվեց «Խնկո Ապոր» անվամբ: 1937 թ. գրադարանը տեղափոխվեց Երևան քաղաքի Ալավերդյան փողոցի վրա գտնվող մանկատան շենք (այժմ՝ Թումանյան փողոցի թիվ 21 շենք): Գրադարանն այն ժամանակ ուներ 2000 միավոր գիրք, 800 ընթերցող և 30 տեղանոց ընթերցասրահ:

Տարիների հետևողական աշխատանքի արդյունքում աստիճանաբար աճեց թե՛ գրքային հավաքածուն, թե՛ ընթերցողների թիվը: Հետագա տարիներին, գրադարանային ոլորտում ծավալած բազմաբնույթ և բազմավեկտոր գործունեության շնորհիվ, մշակութային այս կարևոր օջախը ստացավ հանրապետական (1962 թ.), գիտական (1982 թ.) առաջին կարգի նշանակության գրադարանի, ավելի ուշ՝ «Ազգային գրադարանի» կարգավիճակ (2003 թ. ապրիլից):

Արդեն 1970-ական թվականների սկզբին գրադարանի շենքային սուղ և անբարենպաստ պայմանները չէին բավարարում հան-

ռապետությունում տարեցտարի աճող մանկապատանեկան ընթերցանության պահանջմունքը բավարարելու և գրադարանային բազմաբնույթ աշխատանքներն արդյունավետ ու նպատակային կազմակերպելու համար: Ընդսմին՝ հանրապետությունում արագ զարգացող գրադարանային համակարգի մեթոդական աշխատանքները համակարգողի գործառույթը լիարժեք իրականացնելու անհնարինությամբ պայմանավորված՝ առաջացել էր գրադարանին նոր շենք տրամադրելու անհրաժեշտություն:

Մանկան համաշխարհային տարվա հռչակման առթիվ՝ 1979 թ., կառուցվեց գրադարանի՝ Երևան քաղաքի Տերյան 42/1 հասցեում գտնվող ներկայիս շենքը: 1980 թվականից գրադարանն իր գործունեությունն իրականացնում է ճարտարապետական հոյակերտ հորինվածքով, քառանիստ ծավալ ունեցող վեցհարկանի տիպային շենքում, ուր տարածքները միացած են ընդհանուր ճեմասրահներով:

Գրադարանի շենքը 1978 թ. նախագծել են Հայաստանի վաստակավոր ճարտարապետ Լևոն Ղալումյանը (1940-2017) և ճարտարապետ Ռուզան Ալավերդյանը (1946-2017), որի համար 1981 թ. նրանք արժանացել են Հայաստանի Լենինյան կոմերիտմության մրցանակի:

Կրթամշակութային այս կարևոր կառույցը տարբեր տարիներին ղեկավարել են Սիրուշ Սինանյանը (1933-1937), Ասյա Շաբոյանը (1937-1938), Բաբկեն Զաքարյանը (1938-1939), Անահիտ Հակոբյանը (1939-1969), Հայկուշ Դանիելյանը (1970-1996), Ռուզան Տոնոյանը (1996-ից մինչ օրս):

Այսօր Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանն ունի 90-ամյա պատմություն, որն ամբարում է հայ տպագիր գրքի ավելի քան հինգհարյուրամյա վերելքներով և վայրէջքներով առատ՝ պատմական դժվարին և երկար ճանապարհի գրավոր ժառանգությունը և որպես Հայաստանի Հանրապետությունում մանկապատանեկան ընթերցանության կազմակերպման հարցերով զբաղվող մեթոդական կենտրոն, արդեն 90 տարի մանուկների և պատա-

նիների շրջանում իրականացնում է ընթերցանության զարգացման քաղաքականություն:

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը հանդիսանում է մանկապատանեկան գրականության ազգային պահոց, իսկ ՀՀ գրադարանների մանկապատանեկան բաժիններիհամար՝ գիտամեթոդական, -տեղեկատվական և կրթամշակութային կենտրոն:

Թեպետ տեղեկատվական տեխնոլոգիաների մուտքն արմատապես վերափոխեց գրադարանի գործունեության ավանդական գործիքակազմը, սակայն գրադարանի հիմնական գործառույթները մնացին անփոփոխ. գրադարանն այսօր և՛ս շարունակում է իրականացնել գրադարանագիտական, մատենագիտական, տեղեկատվական և մեթոդական գործունեությունը:

Որպես գիտամեթոդական կենտրոն՝ գրադարանը տարիներ շարունակ կազմակերպում է վարպետության դասեր, սեմինարներ, գիտագործնական կոնֆերանսներ: Կարևորելով շարունակական կրթությունն ու միջազգային փորձի փոխանակումը՝ ՀՀ գրադարանավարների համար պարբերաբար իրականացնում է վերապատրաստման և վերաորակավորման դասընթացներ՝ արտերկրից հրավիրված հեղինակավոր մասնագետների մասնակցությամբ:

Այսօր գրադարանն ունի տպագիր բազմաքանակ վավերագրերի կազմակերպված հավաքածու (2023 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ հավաքածուն կազմում է 545.292 պահպանական միավոր), հայալեզու և ավելի քան 50 օտար լեզուներով գրքեր, պարբերականներ, տեսալսողական փաստավավերագրեր, երաժշտական-նոտագիր հրատարակություններ, որոնք ժամանակավոր օգտագործման է տրամադրում 3-ից 18 տարեկան մանուկներին ու պատանիներին,

նաև՝ մանկապատանեկան գրականության և ընթերցանության խնդիրներով զբաղված անձանց:

Գրադարանի հավաքածուում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում վաղ շրջանի գրքերի հավաքածուն, որը ներառում է 1845-1920 թթ. լույս ընծայված գրքերի բացառիկ և արժեքավոր հրատարակություններ: 1963 թվականից կարևոր այս կառույցն իրականացնում է հրատարակչական գործունեություն՝ մինչ օրս կազմելով և հրատարակելով շուրջ 500 անուն մեթոդական ձեռնարկներ, մատենագիտություններ, կենսամատենագիտություններ, հիշարժան տարեթվերի օրացույցներ և այլն, որոնք անվճար տրամադրվում են հանրապետության գրադարաններին:

Գրադարանից օգտվում է տարեկան շուրջ 20.000 ընթերցող, որոնց սպասարկումն իրականացվում է տարբերակված՝ տարիքային խմբերի տարանջատված ընթերցասրահների առձեռն հավաքածուների միջոցով: Գործում են նախադպրոցականների, 1-4-րդ, 5-8-րդ, 9-12-րդ դասարանցիների համար նախատեսված սպասարկման սրահներ, նաև՝ ընթերցանությունը կազմակերպողների, երաժշտական-նոտագիր վավերագրերի և օտարալեզու գրականության բաժիններ:

Գրադարանագիտական գործունեությունն իրականացնում է գրադարանի Ազգային հավաքածուի պահպանման, Համալրման ու մշակման, Մատենագիտության և Էլեկտրոնային շտեմարանների ձևավորման բաժինների միջոցով: 2004 թվականից գրադարանը միացել է Հայաստանի գրադարանների միացյալ ավտոմատացման ցանցի ստեղծման գործընթացին և շարունակում է իրականացնել էլեկտրոնային համահավաք քարտարանի ձևավորման աշխատանքները, իսկ 2022 թվականից՝ թվային տվյալների շտեմարանը կիրառվում է ընթերցողների էլեկտրոնային սպասարկման նպատակով:

100 ընթերցողի համար նախատեսված ընթերցասրահում սպասարկումն իրականացվում է էլեկտրոնային և քարտային եղանակով, որտեղ ընթերցողները կարող են օգտվել տպագիր մամուլից

և պարբերականներից, տեղեկատվական-հանրագիտարանային բնույթի հարուստ հավաքածուից, արվեստաբանական և գիտական բազմաճյուղ գրականությունից ու ալբոմներից:

Երեխաների մտավոր զարգացմանը նպաստող մշակութային միջավայրի ստեղծումը կրթության կարևոր բաղադրիչներից է, ուստի պատահական չէ, որ ընթերցասրահում՝ մատիտով կատարված որմնանկարներում, պատկերված են Հայոց պատմության առանցքային իրադարձություններն ու ձեռքբերումները՝ հեթանոսությունից սկսած մինչև քրիստոնեություն և քրիստոնեությունից մինչև մեր ժամանակները: Որմնանկարների հեղինակն է ՀՀ վաստակավոր նկարիչ Ռուբեն Ղևոնդյանը (1942-2019): Աշխատանքները կատարվել են 1982-1984 թթ.:

Գրադարանի ձայնադարանում, խմբով կամ անհատապես, կարելի է ունկնդրել տարբեր ժանրերի երաժշտություն: Մանկահասակ, նախադպրոցական և կրտսեր տարիքի ընթերցողները կարող են հյուրընկալվել հեքիաթի սրահում: Ի դեպ, վերոհիշյալ երկու սրահները և՛ս ձևավորվել է Ռուբեն Ղևոնդյանը՝ հայկական և աշխարհի ժողովուրդների հեքիաթների հերոսների կերպարներով:

Գրադարանում գործում են արտադպրոցական մանկապատանեկան խմբակներ և ստուդիաներ (նկարչական, թատերական, օտար լեզուների ուսուցման և այլն), ինչպես նաև՝ «Փաթիլ» տիկնիկային թատրոնը: Գրադարանի ճեմասրահում մշտապես ցուցադրվում են նկարչական ստուդիայի սաների աշխատանքները:

Տարիներ շարունակ գրադարանում կազմակերպվում են տարաբնույթ զանգվածային միջոցառումներ՝ հանդիպումներ, կլոր սեղաններ, համազրույցներ, քննարկումներ, վարպետության դասեր, ցերեկույթներ, շնորհանդեսներ, ցուցահանդեսներ, դասախոսութ-

յուններ, հեքիաթասացություններ և այլ հանդիսություններ: Ավանդույթ է դարձել «Մանկապատանեկան գրքի ցուցահանդես-տոնավաճառը», «Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթը», «Ազգային գրադարանային շաբաթը», «Գրադարանավարի օրը», «Մանկական գրքի միջազգային օրը», «Երեխաների պաշտպանության միջազգային օրը», «Հեքիաթի դեսպաններ» հեղինակային ծրագիրը, որի շրջանակում Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դեսպաններն իրենց մայրենի լեզվով մանուկներին ներկայացնում են ազգային հեքիաթներ: 2017 թվականից կազմակերպում է նաև «Ամառային ճամբար» կրթամշակութային ծրագիրը:

Գերմանիայի դեսպանատան մշակույթի կցորդ Կոստանդին Սելենդի (2012)

Ավանդական միջոցառումներին գրադարանը մշտապես հյուրընկալել է հայ և օտարազգի անվանի մտավորականների, գրողների, արվեստագետների /Ավ. Իսահակյան, Վ. Սարոյան, Ս. Միխալկով, Ստ.Զորյան, Դ. Դեմիրճյան, Հ. Շիրազ, Գ. Գասպարյան, Տ. Լևոնյան, Տ. Սազանդարյան, Օ. Դուրյան, Խ. Գյուլնազարյան, Էդ. Մեժելայտիս, Ա. Այվազյան, Ա. Չիլինգարով, Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս, Հ. Բաղրամյան, Հ. Իգիթյան, Հ. Չեքիջյան և այլն/: Վերջիններիս մակագրություններով գրադարանին ընծայաբերված գրքերն առանձնակի հետաքրքրություն և մշակութային արժեք են ներկայացնում:

Համագործակցությունը գրադարանի գործունեության առաջնային ուղղություններից է, որի իրականացման արդյունքում ստեղծվել և գործում են օտարալեզու գրականության անկյունները. «Իրանական ընթերցասրահը»՝ 2006 թվականից, որը համագործակցում է Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության ու Իրանի մշակույթի զարգացման մանկական կենտրոնի հետ, և համալրված է պարսկերեն լեզվով մանկական, գեղարվեստական, ուսումնական գրականությամբ, տեղեկատվական և տեսալսողական վավերագրերով և տեխնիկական սարքերով, ուր պարսկերենի իրենց իմացությունն են խորացնում աշակերտները, ուսանողներն ու մասնագետները, 2014 թվականից “China Hanban” կազմակերպության հետ համագործակցությամբ գործում է «Չինական անկյունը», որից օգտվում են չինարենն ուսումնասիրող դպրոցականները, ուսանողները և մասնագետները, «Արաբական անկյունը»՝ 2018 թվականից, որ հիմնադրվել է «ԻԲԲԻ ԱՄԷ»-ի և «Կալիմաթ» հիմնադրամի միջոցներով և կահավորվել ու տեխնիկական սարքավորումներով վերազինվել ՀՀ-ում Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանության աջակցությամբ:

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը համագործակցում է աշխարհի մի շարք պետությունների մանկական գրադարանների, մանկապատանեկան գրականության և ընթերցանության խնդիրներով զբաղվող հայրենական և միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա դեսպանությունների հետ՝ իրականացնելով կրթական, գիտական և մշակութային համատեղ ծրագրեր: Անդամակցում է «Մանկապատանեկան գրքի միջազգային խորհրդին» (IBBY), «Գրադարանների միջազգային ասոցիացիային» (IFLA), «Երաժշտական գրադարանների միջազգային ասոցիացիային» (IAML):

Իր բեղմնավոր գործունեության համար գրադարանը բազմիցս պարգևատրվել է շնորհակալագրերով, պատվոգրերով և մեդալներով: